Այս մոդելը և տեխնոլոգիաները մեծապես օգտագործվում են արբանյակային տվյալների մշակման համար, սակայն առաջ են եկել անկախ արբանյակային նկարների օգտագործման ուղղությունից: Տերմինը ներմուծվել է 1990-ականներին որպես տվյալների շտեմարանի չափողականության մոդել: Այս տեսակետից, Data Cube-ը վերաբերում է էլեկտրոնային համակարգին, որը գործ ունի տվյալների սովորական ծավալների խորանարդ աստիճանի հետ: Այժմ տերմինն օգտագործվում է բազմաչափ տվյալների հավաքածուն ներկայացնելու համար: Նույն նպատակով տվյալների հենքերի ճարտարագիտության ասպարեզում օգտագործվում է «առցանց վերլուծական մշակման» խորանարդ (OLAP (Online Analytical Processing) Cube) տերմինը, որը բնութագրում է վերլուծության համար պատրաստ տվյալների բազմաչափ զանգված (Analysis Ready Data (ARD)) և համապատասխան համակարգչային տեխնիկա ու ծրագրային միջոցներ (Nativi, Mazzetti և ուր., 2017):

Տվյալների խորանարդը բնորոշվում է որպես ռասստրային տվյալների զանգված, որի ծավալը վեր է սովորական սերվերի հիշողության հնարավորություններից, որի միևնույն տեսքի տվյալներից յուրաքանչյուրի արժեքը պատկանում է d-չափանի տվյալների խորանարդի կոորդինատային առանցքներով որոշված ռասստրի, և որի այդ առանցքներով որոշված կոորդինատները թույլ են տալիս միանշանակ որոշել զանգվածի կամայական տվյալի հասցեն (Guiliani, Chatenoux և ուր., 2017): Երկրի դիտարկման տվյալների խորանարդն այժմ դիտարկվում է որպես գաղափարային մոտեցումների, մեթոդների և տեխնոլոգիաների ամբողջություն, որն ուղղված է մեծ տվյալների ներուժի ամբողջական օգտագործմանը: Խնդիրն է՝ ստեղծել միջոցներ, որոնք կվերացնեն մեծ տվյալների օգտագործման բարդությունները և կտրամադրեն տարածական-ժամանակային տվյալներ՝ վերլուծության համար պատրաստ վիճակով:

Մի շարք երկրներ «Արբանյակների միջոցով երկրի դիտարկման կոմիտեի» (Committee on Earth Observation Satellites - CEOS) հովանուներքո ստեղծել են ազատ օգտագործման տվյալների խորանարդներ (Open Data Cube (ODC)) (<https://ceosdatacube.org>): Այդպիսի ենթակառուցվածքներ կազմվել են նաև Եվրամիության նախագծերով և առանձին երկրների նախաձեռնությամբ (Nativi, Mazzetti և ուր., 2017):

Կազմվել են նաև մասնագիտացված տվյալների խորանարդներ, որոնց օրինակը ներկայացված է ստորև (Magno, De Filippis և ուր., 2019): Այն աշխարհագրական տարածական տվյալների խորանարդ է՝ կազմված բազմաչափ սկզբունքով, և թույլ է տալիս ներբեռնել, պահպանել, մշակել, վերլուծել և օգտագործել հեռահար զոնդավորման և

օդերևութաբանական տվյալներ: Տես կառուցվածքը հիմնված է Open Geospatial Consortium (OGC) ստանդարտների վրա, տվյալների հենքերի կառավարման համար օգտագործում է PostgreSQL համակարգը, որին ինտեգրված է վիճակագրական մեթոդների բավական մեծ խումբ՝ կազմված R տվյալների վիճակագրական մշակման և համապատասխան գծապատկերների կառուցման համար նախատեսված ծրագրավորման լեզվով:

1.3 Երկրի դիտարկման մեծ տվյալներ (Earth Observation Big Data)

Մեծ տվյալների ուղղության սահմաններում այժմ ձևավորվել են դիտարկումների, հետազոտությունների և կիրառման որոշակի թեմատիկ ասպարեզներ, որոնցից է «Երկրի (դիտարկումների) մեծ տվյալները» (Earth Big Data կամ Earth Observation Big Data): Այդ տվյալների աղբյուրներն են արբանյակներից և ինքնաթիռներից հեռահար զոնդավորման, վերգետնյա մշտադիտարկումների և այլ եղանակներով կատարվող չափումների և դիտարկումների տվյալները: Երկրի դիտարկումների (ԵԴ) մեծ տվյալներին 5V բնութագրիչներից բացի հատուկ է հատկապես այն, որ ստացվելով բազմազան աղբյուրներից, ժամանակի տարբեր հատվածներում (multi-temporal), դրանք մեծամասամբ կոդմուրոշված են տարածության մեջ՝ տարածական և տարամասշտաբ են: Այդ տվյալները միմյանց հետ խիստ կապակցված են իրենց ֆիզիկական բովանդակությամբ, տարածության և ժամանակի մեջ:

ԵԴ մեծ տվյալները լայնորեն օգտագործվում են սեյսմիկայի, վտանգավոր լանջային և այլ բնական ու մարդածին վտանգների, շրջակա միջավայրի, բնական՝ հողային և ջրային ռեսուրսների ուսումնասիրության նպատակով: ԵԴ-ի հետ կապված է նաև «գիտական մեծ տվյալներ» (Scientific Big Data) հասկացությունը: Այդ խմբին վերագրվող տվյալներին հատուկ են՝ բարդ բազմաշերտ բովանդակությունը, գլոբալ ծածկույթը, ինչպես նաև բարձր ինտեգրվածությունը տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հետ: Այս հատկանիշները խթանում են բազմաառարկայական և միջառարկայական գիտական հետազոտությունների զարգացմանը (Guo, Wei և ուր., 2017):

1.4 Արբանյակային հեռահար զոնդավորումը (ՀԶ) որպես ԵԴ մեծ տվյալների կարևոր աղբյուր

Ժամանակակից ՀԶ միջոցով ստացված ԵԴ մեծ տվյալները ունեն բարձր լուծաչափ, երկարաժամկետ և անընդհատ բնույթ: Առավելապես օգտագործվում են Landsat-7, Landsat Sentinel-1, Sentinel-2 արբանյակների տվյալները, որոնք ունեն դիտարկման բարձր հաճախականություն, բարձր լուծաչափ, ազատ հասանելի են և գործում են բազմասպեկտրալ տիրույթներում (multi-band): Այդ արբանյակների դիտարկման տվյալները միմյանց համեմատությամբ ունեն տարբեր բնույթի մասնակի առավելություններ, ինչի պատճառով որոշակի խնդիրներ հաջողությամբ լուծվում են դրանց տվյալների համադրությամբ (Michella, Vescovi և ուր., 2019; Tiede, Sudmanns և ուր., 2019; Chung, Jung և ուր., 2019; Quintanao, Fernández-Mansob և ուր., 2018): Մեծ

տվյալների օրինակ են հանդիսանում հեռահար զոնդավորման տվյալների հիման վրա ստեղծված մի շարք հավելվածներ: Օրինակ՝ Google Maps-ը և Google Earth-ը համացանցում քարտեզագրման ամենատարածված ծրագրերից երկուսն են: Թե՛ Google Earth-ը, և թե՛ Google Maps-ը ունեն հասնելիություն Google Earth Engine-ին, մի հարթակի, որն ապահովում է արբանյակային պատկերների, տեղանքի տվյալների և վեկտորային տվյալների (սահմանները, ճանապարհները, բնակավայրերը, հողի և կլիմայի վերաբերյալ տեղեկատվությունը) հսկայական պահոց:

Ստորև ներկայացվում են արբանյակային տվյալներով հաշվարկվող առավել օգտագործվող ցուցանիշները:

1. Բուսականության նորմալացված տարբերությամբ ինդեքս (ԲՆՏԻ) (Normalized Difference Vegetation Index NDVI), որը ֆոտոսինթետիկ գործունեության կամ «կանաչության» ցուցանիշ է:
2. Բուսականության կատարելագործված ինդեքս (ԲԿԻ) (Advanced Vegetation Index, AVI), հաշվարկվում է առ պիքսել, օգտագործվում է ժամանակի ընթացքում ցանովի կուլտուրաների և անտառների փոփոխությունները դիտարկելու համար:
3. Ջրի նորմալացված տարբերությամբ ինդեքս (ՋՆՏԻ) (Normalized Difference Water Index NDWI), որն օգտագործվում է ջրային մարմինների տարանջատման համար:
4. Ձյան նորմալացված տարբերությամբ ինդեքս (ՁՆՏԻ) (Normalized Difference Snow Index (NDSI), ցույց է տալիս ձյան ծածկույթի տարածումը, հաշվարկվում է առ պիքսել:
5. Խոնավության նորմալացված տարբերությամբ ինդեքս (ԽՆԴԻ) (Normalized Difference Moisture Index (NDMI), արտահայտում է բույսերում ջրի պարունակությունը:
6. Քլորոֆիլի գունանյութերի նորմալացված հարաբերակցության ինդեքսը (*Normalized Pigment Chlorophyll Ratio Index* NPCRI), բուսականության մեջ քլորոֆիլի պարունակությունն որոշելու համար, ինչպես նաև ջրիմուռների տարածումը գնահատելու նպատակով:
7. Այրվածության նորմալացված հարաբերություն (ԱՆՀ) (Normalized Burn Ratio NBR), անտառային և այլ բուսածածկ տարածքների հրդեհների հետևանքների գնահատման համար:

1.5 Երկրի դիտարկումների մեծ տվյալների խորանարդի մշակման հայաստանյան փորձը («Armenian Data Cube»)

Երկրի դիտարկումների Տվյալների Խորանարդի (ԵԴՏԽ) նոր պարադիգմը Հայաստանի տարածքի համար իրականացվել է Շվեդարահայկական համագործակցությամբ, տեղակայված և հասանելի է <http://datacube.sci.am> հասցեով (Asmaryan, Muradyan և ուր., 2019): Համաձայն ԵԴՏԽ հիմնարար նպատակի, Հայկական ՏԽ-ի ստեղծման խնդիրը ևս եղել է վերլուծության համար պատրաստ տվյալների (Ana-

lysis Ready Data) ստացումը և դրանց հասանելիության ապահովումը Հայկական ՏՖ տվյալների բազայի միջոցով:

Վերլուծության համար պատրաստ տվյալները (ՎՊՏ) ստացվում են չորս նախնական ավտոմատացված քայլերի միջոցով (տվյալների հավաքագրում, ռադիոմետրիկ ստուգաչափում, մթնոլորտի վերին մասի անդրադարձման փոխակերպում և մակերևույթի անդրադարձման փոխակերպում), ինչն այնուհետև թույլ է տալիս վերլուծել տվյալները և ստեղծել ժամանակային շարքեր (Giuliani, Chatenoux և ուր., 2017):

Հայաստանը միացել է Երկրի դիտարկումների արբանյակների կոմիտեի (Committee on Earth Observation Satellites, CEOS) նախաձեռնությանը նպատակ ունենալով զարգացնել ԵՂՏՖ-ն և օգտագործել այն մի շարք արդիական խնդիրների լուծմանը, որոնք են.

- բնապահպանական խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում է արդյունավետ արբանյակային մոնիտորինգի տվյալներ,
- կլիմայական տարրերի փոփոխությունների ուսումնասիրում,
- վտանգավոր պրոցեսների մոնիտորինգ, իրական ժամանակում արձագանքում,
- կայուն զարգացման նպատակով բնական ռեսուրսների ճշգրիտ գույքագրում, վերլուծություն և տարածքի շրջանացում:

Կառուցելով հայկական ՏՖ-ն, Հայաստանը այլ երկրների շարքում եզակի հնարավորություն ունեցավ մասնակցելու համաշխարհային զարգացման օրակարգի ձևավորման գործընթացին:

Այժմ ԵՂՏՖ տեխնոլոգիաները դեռ բարելավվում են և մինչ անհրաժեշտ տվյալներ ստանում են մի քանի հետազոտական կամ միջազգային կազմակերպություններից: Հայաստանի ԵՂՏՖ-ն պարունակում է Հայաստանի տարածքի համար 3 տարվա (2016–2019) Landsat-8 և Sentinel-2 վերլուծության համար պատրաստ տվյալներ:

Ներկայումս, հայկական ՏՖ-ում ներառված է ջրային օբյեկտների սահմանների որոշման գործիքը, որի միջոցով ուսումնասիրվել են Սևանա լճի ափագծի փոփոխությունները (Asmaryan, Muradyan և ուր., 2019): Գործիքի հիմքում ընկած է ջրի նորմալացված տարբերությամբ ինդեքսը (NDWI): Ջրային տարածքները ցամաքից տարանջատվում են կիրառելով ՄաքՖիթերսի մեթոդը՝

$$NDWI = (G - NIR) / (G + NIR),$$

որտեղ (G)-ն կանաչ միջակայքն է, NIR՝ մերձակա ինֆրակարմիր միջակայքը:

Asmaryan և ուր. (2019) հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 10մ լուծաչափով Sentinel-2 արբանյակային պատկերի հիման վրա նորմալորված հարաբերական ջրային ինդեքսի միջոցով ափագծի տարանջատումը տալիս է բավական բարձր ճշտությամբ արդյունք Սևանա լճի համար: Ներկայացվող ԵՂՏՖ միջավայրում արբանյակային տվյալների տեսարանները (Landsat-5,7,8 և Sentinel-2) հասանելի են Python-ի «gsutil» հավելվածի միջոցով, որը հնարավորություն է

տալիս մուտք գործել Google Cloud Storage հրամանի տողերից:²

Երկրի մակերևույթի ուղիղ դիտարկման (Live Monitoring of Earth Surface, LiMES) ցանցը օգտագործվել է ՎՊՏ կազմելու գործողությունները՝ տվյալների հայտնաբերումը և (նախա)մշակումն ավտոմատացնելու համար: Այս ցանցը մշակվել է տվյալների պահպանման մեծ կարողությունների, տարաբաշխված բարձր արտադրողականությամբ համակարգիչների և փոխգործունակ ստանդարտների օգտագործմամբ:

2. Մեծ տվյալների խորանարդի միջավայրում և միջոցներով լուծվող գիտական խնդիրներ. գրականության տեսություն

2.1 Երկրաբանական գիտություններ

Երկրաբանական գիտական հետազոտությունների սկզբունքային մեթոդներից է պատճառ – հետևանք օրինաչափությունների պարզաբանումը: Բավարար ծավալի դիտարկման տվյալների առկայության դեպքում օգտագործվում է կոռելյացիայի եղանակը (Qi, Liu, 2019): Ընդ որում, կոռելյացիա ասելով հեղինակները նկատի ունեն մեծ թվերով ներկայացված առարկաների կամ երևույթների և վիճակագրական, և տարածական կապը: Մի շարք երկրաբանական խնդիրների լուծման համար նշված եղանակը լավագույնն է: Մեծ տվյալների օգտագործումը սկզբունքորեն հզորացնում է այս եղանակը և դարձնում է այն կարևորագույն գիտական գործիք:

Տասնամյակներ առաջ մեծ տվյալների օգտագործմամբ ձևավորվեց սալերի տեկտոնիկայի տեսության վրա հիմնված՝ բազալտային ապարների կազմավորման գեոդինամիկական իրադրության որոշման երկրաքիմիական դիսկրիմինանտային դիագրամների եղանակը: Այժմ այ լայնորեն օգտագործում է ռեգիոնալ տեկտոնիկայի և հրաբխականության պրոցեսների մոդելավորման նպատակով:

Մեծ տվյալների տեխնոլոգիաներով՝ ներառյալ մեքենայական ուսուցման, նեյրոնային ցանցի և արհեստական բանականության մեթոդները (machine learning, neural network, and artificial intelligence, etc.) ուսումնասիրվել է օգտագործվող դիագրամների հավաստիությունը (Qi, Weidong և ուր., 2019): Նորացված միջազգային տվյալների հենքերից վերցված բազալտների 400 հազար նմուշների քիմիական կազմի վիճակագրական վերլուծությամբ հեղինակները եզրակացնում են, որ նախկինում կառուցված և մինչ այժմ օգտագործվող դիագրամները, հատկապես ապար կազմող օքսիդների դիագրամները, բավարար չափով հավաստի չեն: Հեղինակները կազմել և առաջարկում են հավաստիության սկզբունքով իրենց կողմից կազմված (confidence ellipse) եղանակով վեց նոր՝ արդյունավետ դիագրամներ:

² <https://cloud.google.com/storage/docs/gsutil>

Մեծ տվյալների կիրառման մեկ այլ օրինակ է գրանիտների քանակական դասակարգումը և դրանց մետադաժնության գնահատումը վիճակագրական եղանակով (Q-կլաստերացում): Մեծ թվով՝ 500-ից ավելի գրանիտների նմուշներ ըստ ապար կազմող օքսիդների պարունակության հեղինակները բաժանել են դասերի և ենթադասերի: Այնուհետև, հանքայնացման տարածական բաշխման վերլուծությամբ հայտնաբերվել է ոսկու, պղնձի և ցինկ/կապարի տարածական կապակցվածությունը որոշակի խմբերի գրանիտների հետ (Wang, Wang և ուր., 2019):

2.2 Բնական վտանգներ

Սողանքների ուսումնասիրություն

Լանջային պրոցեսների մոնիտորինգի նպատակով օգտագործվում են հեռահար զոնդավորման ինտերֆերոմետրիկ մեթոդներ: Sentinel-1 և 2 արբանյակների համակարգը SAR (Interferometric Synthetic Aperture Radar) (Tiede, Sudmanns և ուր., 2019; Kyriou, Nikolakopoulos, 2018) և PSI (Persistent Scatterer Interferometry) միջոցով երկարատև դանդաղ շարժման ֆոնի վրա հայտնաբերվում են նաև ոչ մեծ կտրուկ տեղաշարժեր: Այդպիսի օրինակ դիտվել է ֆրանսիական Ալպերում, որտեղ յոթ ամսյա մոնիտորինգի ընթացքում դիտվել է ցածր ակտիվություն (≤ 1 մ), ինչից հետո՝ կտրուկ տեղաշարժ (3.2 ± 1.2 մ) երեք օրվա ընթացքում (Lacroixa, Bievrea և ուր., 2018):

Ջրհեղեղների ուսումնասիրություն

Հեռահար օպտիկական դիտարկման և ռադարային զոնդավորման եղանակները օգտագործվում են ջրհեղեղների վտանգի գնահատման, հեղեղման ռիսկի նվազեցման գործողությունների իրականացման նպատակով: Այդ երկու եղանակներով որոշվում և քարտեզագրվում են հնարավոր հեղեղման տարածքները, մշակվում են վտանգի նվազեցման միջոցառումներ (Vidyapriya, Kaviya և ուր., 2019; Huska, Jurik և ուր., 2017):

Landsat և MODIS արբանյակային համակարգերի տվյալների համադրումը ջրհեղեղի գնահատման դրական արդյունքներ է տալիս (Lin, Di և ուր., 2016): Ջրածածկման տարածքն որոշելու նպատակով օգտագործվում են երկու խումբ դիտարկումներ՝ նախքան ջրհեղեղը և դրանից հետո: Այդ տվյալներով քարտեզագրվում է ջրածածկման տարածքը և գնահատվում են պատճառած վնասները (Klemas, 2015):

Անտառային հրդեհների ուսումնասիրություն

Արբանյակային հեռահար դիտարկումների տվյալները օգտագործվում են. 1. անտառային հրդեհների առաջացման վտանգի գնահատման, 2. մեծ ծավալի հրդեհի տարածմանը հետևելու և 3. հրդեհի հետևանքով առաջացած վնասը գնահատելու նպատակով:

Արբանյակային դիտարկման տվյալներով առաջին նպատակի համար ուսումնասիրվում է բուսականության վիճակը և գնահատվում է հնարավոր այրվող նյութի քանակը և չորության աստիճանը: Երկ-

բորդ նպատակով NOAA AVHRR արբանյակների տվյալներով կազմվել են հրդեհի տարածման դինամիկ քարտեզներ:

Մեծ թվով ուսումնասիրություններ կատարվել են երրորդ խնդրի հետ կապված, որոնց հիմնական մեթոդը հետևյալն է: Հեռահար զոնդավորման տվյալների ժամանակային շարքով հաշվարկվում է բուսականության նորմալացված տարբերությամբ ինդեքսը (Normalized Difference Vegetation Index, NDVI) և այրվածության նորմալացված հարաբերությունները (Normalized Burn Ratio - NBR), պիքսելների համադրման եղանակով տարանջատվում են այրված տեղամասերը (Chung, Jung և ուր., 2019):

Հրդեհների հետևանքների գնահատման նպատակով օգտագործվում է նաև Sentinel-2 արբանյակի բազմասպեկտրալ (Multi-Spectral Instrument (MSI) և Landsat-8 արբանյակի տվյալների համադրումը (Quintanoa, Fernández-Mansob և ուր., 2018): Այդ արբանյակների զոնդավորումները կատարվում են միևնույն սպեկտրալ ալիքի երկարություններում, սակայն երկրորդ արբանյակի տվյալները ունեն ավելի բարձր լուծաչափ և ստացվում են ավելի հաճախ: Միևնույն ժամանակ մի շարք հետազոտություններով պարզվել է, որ Sentinel-2A and Sentinel-2B արբանյակները ունեն որոշակի բնական ռեսուրսների ներկայացման առավելություններ, այդ թվում նաև հրդեհի արդյունքում անտառի այրվածության աստիճանի գնահատման դեպքում: Այդ երկու արբանյակների տվյալների համադրությամբ զգալի կերպով ճշգրտվել է միջերկրածովային էկոհամակարգում հրդեհված տարածքի սահմաններն և պատճառված վնասները:

Երաշտի ուսումնասիրություն

Երաշտի ռեգիոնալ և գլոբալ հետևանքների գնահատման նպատակով առավելապես օգտագործվում են MODIS երկարաժամկետ և մեծ ծածկույթով տվյալները: Սակայն բազմատեսակ բուսականությամբ մեծ տարածքների ուսումնասիրության դեպքում արդյունավետ է համարվում Sentinel-2 արբանյակային տվյալների օգտագործումը: Հաշվարկվում և համադրվում են բուսականության վիճակի (Vegetation Condition Index, VCI), ջրի տարբերության նորմալացված (Normalized Difference Water Index, NDWI) և երաշտի նորմալացված բազմա-տիրույթ (Normalised Multi-Band Drought Index, NMDI) ինդեքսները: Երաշտի ինդեքսի ավելի ճշգրիտ արժեքներ ստանալու համար խորհուրդ է տրվում կատարել ուսումնասիրվող տեղանքին համապատասխանող տվյալների ստուգաչափում՝ օգտագործելով տեղումների և գոլորշացման տվյալները (Nguyen, Nguyen, 2016):

2.3 Երջակա միջավայրի հետազոտություններ՝ անտառների դասակարգում և հողօգտագործման մոնիտորինգ

Անտառային տարածքի բուսականության քարտեզագրման նպատակով օգտագործվում են Sentinel-1, Sentinel-2 and SPOT-6 արբանյակների տվյալները, որոնք մշակվում են Random Forest ուսուցմամբ դասակարգման ալգորիթմով (Random Forest supervised classification): Այս

եղանակով հաջողվել է տարանջատել և քարտեզագրել հետևյալ տեսակի տարածքներ. բուսականությունից զուրկ, անտառ և մանրանտառ, ճահիճ և աշնանացան, ամառային ցանքատարածություն, մարգագետին և ջուր: Լավագույն արդյունքը ստացվում է բևեռացման (polarizations VV and VH) եղանակների համադրմամբ: Բարձր ճշտության արդյունք ստացվում է նաև SAR NDVI, NDWI, S2rep, IRECI ինդեքսների համադրությամբ (Niculescu, Billey և ուր., 2018):

Sentinel-2 պատկերների բազմասեզոն ժամանակային շարքը, շնորհիվ արբանյակի բազմասպեկտրալ բնույթի, բարձր տարածական լուծաչափի և դիտարկման բարձր հաճախականության, թույլ է տալիս ըստ բուսականության ինդեքսների իրականացնել անտառների միջին և մեծ մասշտաբի արդյունավետ դասակարգում, որի արդյունքում տարանջատվում են փշատերև, լայնատերև, խառն անտառներ և չորս տեսակներ՝ հաճարենու, եղևնու և խառը կաղնու անտառներ (Puletti, Chianucci և ուր., 2017):

Ֆորմալ դասակարգման եղանակով Sentinel-2A պատկերների վերլուծությամբ քարտեզագրվել են հողի ծածկույթի և հողօգտագործման պայմանների ժամանակի ընթացքում տեղի ունեցած անկառավարելի փոփոխությունները (Szostak, Hawryło և ուր., 2017):

3. Հայաստանում Երկրի մասին գիտությունների արդիական խնդիրներ

Մեծ տվյալների մեթոդների և տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանում կարևոր նշանակություն կունենա երկրաբանական, աշխարհագրական, բնապահպանության և հարակից գիտությունների արդիական խնդիրների լուծման համար: Ստորև ներկայացվում են այդ գիտական ասպարեզների խնդիրներ, որոնց լուծումն ունի նաև գերակա գործնական նշանակություն:

3.1 Արբանյակային տվյալների արխիվացման և օգտագործման սկզբունքների մասին

Երկրի դիտարկման (ԵԴ) մեծ տվյալների ստացման, պահպանման և մշակման նպատակով մեծ տարածք ունեցող երկրները՝ օրինակ Ռուսաստանը, կազմակերպել են ռեգիոնալ կենտրոններ, որոնք միասին կազմում են տարածքային բաշխվածությամբ արխիվների համակարգ (распределенные архивы спутниковых данных) (Балашов, Ефремов и др., 2008):

Ի տարբերություն դրան Հայաստանի ոչ մեծ տարածքի տվյալները կարող են արխիվացվել և պահպանվել կենտրոնացված ձևով:



Նկ.1. Արբանյակային տվյալների առ պիքսել կառուցվածքը, յուրաքանչյուր աղյուսակ պարունակում է մեկ ֆիքսված պահի տվյալներ:

Բնական գիտությունների հետազոտությունների հիմնական խնդիրն առարկաների և երևույթների տարածական-ժամանակային (սեզոնային և երկարաժամկետ) փոփոխությունների պարզաբանումն ու վերլուծությունն է: Այդ բովանդակության հետազոտությունները հատկապես արդիական են կլիմայական փոփոխությունների և ուժգնացող մարդածին ճնշումների պայմաններում: Նշված արդիական խնդիրների թեմատիկան չափազանց լայն է՝ բնական ռեսուրսների հաշվառում, արդյունավետ օգտագործում և պահպանում, բնական և մարդածին վտանգների մոնիտորինգ և աղետների ռիսկերի նվազեցում, էկոլոգիական համակարգերի ուսումնասիրություն և պահպանում, ինչպես նաև մի շարք հիմնարար տեսական խնդիրներ:

Հայաստանի տարածքին վերաբերվող Sentinel, Landsat և այլ ազատ օգտագործման արբանյակային տվյալների ամբողջական ծավալով արխիվացման և վերլուծության համար պատրաստ վիճակով տվյալները (ՎՊՏ) վերջնական օգտագործողին տրամադրելը մեծապես կնպաստի երկրի մասին և հարակից գիտությունների գերակա հետազոտությունների և միջճյուղային գիտական համագործության զարգացմանը:

Ստորև ընդհանուր ձևով ներկայացվում են այդ խնդրի լուծման պարզ սխեման և բաղադրիչները.

- արբանյակային (առ պիքսել) տվյալների հենք հետևյալ ատրիբուտներով. Date ID, Longitude, Latitude, Altitude (elevation), Cloud cover (yes/no), Band1 value, Band2 value, ..., ..., Band 13 value (նկ.1),
- վերգետնյա օդերևութաբանական և այլ ուղղվածության մոնիտորինգի կայանների ցանցի տվյալների հենք հետևյալ ատրիբուտներով. Date, Station ID, Station name, Station Longitude,

Station Latitude, Station Altitude, Temperature C°, Precipitation mm. (նկ.2),

- արբանյակային տվյալների որևէ տարածքին և ժամանակահատվածին վերաբերվող մասնակի (ոչ լրիվ ատրիբուտներով) տվյալներ դուրս բերելու և հաշվողական բլոկ փոխանցելու օգտագործողի ինտերֆեյս (կազմված է USGS Earth Explorer օրինակով) (նկ.3): Ինտերֆեյսը տալիս է հնարավորություն ընտրելու դիտարկման տարածք, ժամանակահատված, ալիքի երկարության տիրույթ,
- ՀՀ տարածքի թվային քարտեզների և այլ տարածական տվյալների հենք (ներկայացված է VGSE գեոպորտալում)³,
- հաշվողական բլոկ՝ գործիքակազմ ArcGIS-ում/QGIS-ում, հնարավոր է նաև
- ռուսական ScanEx ծրագրի համադրմամբ,
- ազատ օգտագործման ԱՏՀ (GIS) - վերլուծությունների և դրանց արդյունքների գրաֆիկական, աղյուսակային և քարտեզագրական ներկայացման գործիքակազմով:

Մակերևութային ջրերի պաշարները կլիմայի փոփոխության հետևանքով նվազելու միտում ունեն: Դրա հետ մեկտեղ բնակչության թվի աճի և տնտեսության զարգացման հետևանքով աճում է ջրի պահանջարկը: Հայաստանի հանրապետության բարձրադիր լեռնային տարածքում գոյանում են բավական մեծ ծավալի ջրային ռեսուրսներ, սակայն որոշ բնական և մարդածին գործոններով պայմանավորված, երկրում ջրի պահանջարկը լիովին չի բավարարվում:

Օդերևութաբանական դիտարկումների ՏՀ կառուցվածքը


Մնաթիվ							Կմներ, մմ
Մնաթիվ							
Մնաթիվ							ՏՊ
ID	Կայանի անվանումը	Լայնություն	Երկայնություն	Բարձրություն	Ձերմաստիճան, °C	Տեղումներ, մմ	

Տարածական շարժեր

Ժամանակային շարժեր

Նկ.2. Օդերևութաբանական մոնիտորինգի տվյալների հենքի կառուցվածքը. Յուրաքանչյուր աղյուսակ պարունակում է դիտարկման ցանցի բոլոր կայանների մեկ ֆիքսված պահի տվյալներ:

³ <http://vgse.geology.am/>



Նկ.3. Պահանջված տարածքի, ալիքի երկարության և ֆիքսված պահի համար ընտրված արբանյակային պատկերը⁴

3.2 Մակերևութային ջրային ռեսուրսների քանակի և որակի գնահատման, դրանց փոփոխությունների կանխատեսման համակարգ

Ինչպես և այլ երկրներում, Հայաստանում ևս քաղցրահամ ջրի պակասի էական պատճառներից են նաև տնտեսության ոչ ռացիոնալ զարգացումը և ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարումը:

Ներկայացված պայմաններում արդիական խնդիր է ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման տեղեկատվական-վերլուծական համակարգի ստեղծումը, որն ընդունելով վեր-գետնյա և արբանյակային մշտադիտարկումների տվյալներ, ունենալով թվային քարտեզների անհրաժեշտ համալիր, կարող է մեծ տվյալների մեթոդներով կանխատեսել ձմռան/գարնան ընթացքում կուտակվելիք ջրի պաշարները: Համակարգը նաև կարող է իրական ժամանակում հաշվարկել կուտակված և ծախսված ջրի քանակները՝ կազմելով ջրային և ջրատնտեսական դինամիկ հաշվեկշիռներ առցանց որոշումներ կայացնելու համար:

Համակարգի գործառնություններն իրականացնելու նպատակով նախապես անհրաժեշտ է լուծել ստորև ներկայացված գիտական և գործնական խնդիրները:

3.2.1. Ջրային ռեսուրսների ձևավորման գնահատման արդի գիտական խնդիրները

ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու նպատակով իրականացվել են մեծ թվով ուսումնասիրություններ, սակայն ստորև ներկայացված խնդիրները չեն լուծվել այն աստիճանի, որ

⁴ <https://earthexplorer.usgs.gov/>

արդյունքները համակարգված կերպով օգտագործվեն գործնական նպատակներով:

Արդիական է լուծել հետևյալ գիտական խնդիրները.

- Մակերևութային հոսքի ձևավորման ընդհանուր մոդելի մշակում և տեղայնացված կիրառում առանձին գետավազանների պայմաններում: Որպես հոսքի ձևավորման գործոններ կդիտարկվեն՝ օդերևութաբանական պայմանները, ռելիեֆի մորֆոմետրիական ցուցանիշները, լեռնային ապարների լիթոլոգիական տեսակները, բուսականության և հողերի տեսակները: Խնդիրն ունի բազմագործոն լուծում՝ դիտարկվող գործոնների ԱՏՀ թվային շերտերի վրադրման եղանակով:
- Ջրային ռեսուրսների երկարաժամկետ փոփոխությունների կանխատեսման մոդելների գնահատում և տեղայնացում ՀՀ բնական պայմաններում:
- Մակերևութային ջրերի հոսքի քանակի և ստորերկրյա ջրերի դեբիտի միջև կապի պարզաբանում:
- Աղտոտման հետևանքով ՀՀ տարածքում օգտագործման համար պիտանի ջրերի քանակի նվազման օրինաչափությունների ուսումնասիրություն և քարտեզագրում:

3.2.2. Ջրային ռեսուրսների կառավարման արդի գործնական խնդիրները

Վերը նշված տեսական խնդիրների լուծումը թույլ է տալիս կատարել մակերևութային ջրերի հոսքի քանակի և պաշարների դինամիկ հաշվարկներ և կանխատեսումներ:

Այդ ուղղությամբ առաջին նպատակը փոքր լճերի և արհեստական ջրամբարների ջրով լցվածության և ջրի բացթողումների օպերատիվ գնահատումն է, հաշվի առնելով մթնոլորտային տեղումների (ձյան և անձրևի տեսքով) դինամիկան և քանակը: Օգտագործվող տվյալներն են. ռելիեֆի թվային մոդելը, ձյան ծածկույթի և ավազաններում ջրի հայելու տիեզերական դիտարկումների ժամանակային շարքերը, հիդրոլոգիական և օդերևութաբանական մոնիտորինգի տվյալների շարքը:

Երկրորդ խնդիրը գետային աղետալի հոսքի և ջրհեղեղի առաջացման կանխատեսումն է՝ հաշվի առնելով ձյան ծածկույթի տարածումը և ձնհալի ռեժիմը, որը կանխատեսվում է օդի ջերմաստիճանի և անձրևի տեսքով տեղումների տվյալներով:

3.3 Անտառային հրդեհների վտանգի գնահատման և բռնկման կանխատեսման էքսպերտային համակարգի ստեղծման խնդիր

Անտառային և այլ բուսածածկ տարածքների պահպանումը հրդեհներից դառնում է ավելի արդիական կլիմայի փոփոխությունների պայմաններում: Հայաստանում անտառային հրդեհների վտանգի նվազեցման աշխատանքներ իրականացվում են երկու ուղղությամբ: Հայաստան կազմակերպությունը կազմել է առանձին անտառային տնտեսությունների թվային քարտեզներ, որոնք հրդեհի վտանգը գնահատում են հաշվի առնելով մեկ գործոն՝ ծառերի կենսաբանական տեսակները:

Մյուս ուղղությամբ Հայպետհիդրոմետ գործակալությունը տալիս է վտանգի օդերևութաբանական օպերատիվ գնահատական ըստ օդի ջերմաստիճանի և օդի խոնավության: Այդ երկու բնույթի միմյանց հետ չկապված գնահատականները լիովին չեն լուծում քննարկվող արդիական խնդիրը: Դրա համալիր լուծման ճանապարհը ժամանակակից տեխնոլոգիաներով ավտոմատացված՝ առցանց գործող անտառային հրդեհների վտանգի բազմագործոն գնահատման, բռնկման կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգի ստեղծումն ու ներդրումն է:

Համակարգի գործողությունների հաջորդական քայլերը հետևյալներն են.

1. Դաշտային սենսորների ավտոմատացված ցանցի և Հայպետհիդրոմետ գործակալության օդերևութաբանական մոնիտորինգի, Sentinel-2 և MODIS արբանյակների տվյալների ստացում և փոխանցում վերլուծական կենտրոն, միացյալ տվյալների հենքի կազմում:
2. Հրդեհի «վտանգի ինտեգրալ ինդեքսի» հաշվարկ և տարածքի ԱՏՀ շերտի կազմում, որը հանդիսանում է վտանգի բազմագործոն (օդի ջերմաստիճանի և խոնավության, հողի ջերմաստիճանի և խոնավության, բուսականության) դինամիկ քարտեզագրական դիֆերենցված գնահատական:
3. Երկարաժամկետ անփոփոխ բնութագրիչներով անտառային տարածքի գնահատման ԱՏՀ ստատիկ շերտի կազմում: Հաշվի են առնվում՝ տարածքի տեղագրական հատկանիշները՝ ռելիեֆի թեքությունը, կողմնադրությունը, բարձրության գոտիները և անտառի բնութագիրը (հիմնականում՝ դյուրավառ անտառանյութի քանակը): Ըստ դիտարկվող գործոնների համալիր գնահատականի տարածքում տարանջատվում և քարտեզագրում է վտանգի երեք մակարդակ:
4. Տարածքի դինամիկ և ստատիկ ԱՏՀ շերտերի համադրմամբ հրդեհի բռնկման հնարավորության կանխատեսում և իրավիճակային քարտեզի կազմում:

Հրդեհի ռիսկի նվազեցման էքսպերտային լուծումները և գործողությունների առաջարկները կազմվում են ավտոմատ կերպով էքսպերտային «գիտելիքների բազայի» (ԳԲ) և տրամաբանական արդյունքների կառավարման (ՏՄԿ) (Logic Output Manager) ծրագրային մոդուլների օգտագործմամբ:

ԳԲ-ն ընդգրկում է հակահրդեհային պաշտպանության պաշտոնական կարգավորումներ և հրահանգներ, ինչպես նաև մասնագիտական փորձի և հրդեհների նախադեպերի «պատմությունը»:

ՏՄԿ-ծրագիրն ընտրում է յուրաքանչյուր նախահրդեհային իրավիճակին վերաբերվող հրահանգով սահմանված և գործնական փորձով արդարացված գործողություններ և կազմում է անհրաժեշտ միջոցառումների առաջարկ:

Վտանգի և միջոցառումների մասին նախագգուշացման գործառույթն իրականացվում է տազնալի ազդարարման (SU) ծրագրային մոդուլի միջոցով: SU մոդուլն ելնելով ահագանգի բովանդակությունից ընտրում է հրահանգներով սահմանված հասցեատերերին և ուղարկում է տեքստային հաղորդագրություն:

Նախահրդեհային իրադրության փոփոխության դեպքում գործառույթը կրկնվում է համաձայն նոր ստեղծված իրավիճակի:

Եզրակացություն

Հոդվածում ներկայացված գրականության տեսությունը ցույց է տալիս մեծ տվյալների ժամանակակից բովանդակությունը և երկրի դիտարկման մեծածավալ տարածական և ժամանակային շարքերի կիրառման լայն հնարավորությունները երկրաբանության, աշխարհագրության, բնապահպանական գիտական խնդիրների լուծման համար: Այդ նպատակով օգտագործվող երկրի դիտարկման մեծ տվյալների հոսքեր ստացվում են տարատեսակ աղբյուրներից՝ արբանյակների հեռահար դիտարկումներից, վերգետնյա ավտոմատացված մոնիտորինգի սարքերից, թվայնացման գործիքների և սկաներների, թվային՝ քանական մոդելավորման և այլ միջոցներով: Այս բազմատեսակ տվյալների անհամասեռ ամբողջությունն առաջարկվում է հայերեն անվանել «Երկրի թվային տվյալներ»՝ հետևելով արդեն լայն օգտագործում ստացած դրանց ընդհանուր «Digital Earth Data» անվանմանը:

Այդ տվյալների կազմակերման և օգտագործման մեծ տվյալների խորանարդ (Big Data Cube) կոչվող մոդելը և տեխնոլոգիաները առ այսօր առավել զարգացած և արդյունավետ են երկրաբանության և հարակից գիտական հետազոտություններում օգտագործելու համար: Այս մոդելի սկզբունքային առավելությունը կայանում է նրանում, որ այն արբանյակներից և դիտարկման այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը հետազոտողին տրամադրում է «վերլուծության համար պատրաստ տվյալներ»-ի ձևով:

Հայաստանի տարածքին վերաբերվող Sentinel, Landsat և այլ ազատ օգտագործման արբանյակային տվյալների ամբողջական ծավալով արխիվացված և վերլուծության համար պատրաստ վիճակով տվյալները (ՎՊՏ) հետազոտողին (վերջնական օգտագործող) տրամադրելն անհրաժեշտություն է չափազանց լայն թեմատիկա ընդգրկող խնդիրների լուծման համար, որոնք հատկապես արդիական են կլիմայական փոփոխությունների և ուժգնացող մարդածին ճնշումների պայմաններում: Դրանց թվին են պատկանում հոդվածում ներկայացված խնդիրները, որոնց ուղղությամբ ընթանում են հեղինակների հետազոտությունները:

Հոդվածում քննարկվող գիտական հետազոտությունների արդյունավետությունն, իսկ դրանցից մի մասի իրականացումը հնարավոր է

միայն Երկրի դիտարկումների հայկական տվյալների խորանարդի հետազոտական զարգացման դեպքում:

Գրականություն

- Ասատրյան, Հ., Սահակյան Վ., Շուքրյան Յ.** 2017. Գիտական հաշվարկներ և մեծ տվյալներ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, Հաշվողական համակարգեր-Օրագրավորում-Ուսումնական ձեռնարկներ:
- Балашов И.В., Бурцев М.А., Ефремов В.Ю., Лупян Е.А., Прошин А.А., Толпин В.А.,** 2009. Построение архивов результатов обработки спутниковых данных для систем динамического формирования производных информационных продуктов. Современные проблемы, Современные проблемы дистанционного зондирования Земли из космоса, В.6, Т.2, с.513-520.
- Asmaryan Sh., Muradyan V., Tepanosyan G., Hovsepyan A., Saghatelyan A., Astsatryan H., Grigoryan H., Abrahamyan R., Guigoz Y., Giuliani G.** 2019. Paving the Way towards an Armenian Data Cube, Data, 4, 117; doi:10.3390/data4030117.
- Chung M., Jung M., Kim Y.** 2019. Wildfire Damage Assessment Using Multi-Temporal Sentinel-2 Data, The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences, Volume XLII-3/W8, GeoInformation for Disaster Management, Prague, Czech Republic.
- Giuliani G., Chatenoux B., De Bono A., Rodila D., Richard J., Allenbach K., Dao H., Peduzzi P.** 2017. Building an Earth Observations Data Cube: lessons learned from the Swiss Data Cube (SDC) on generating Analysis Ready Data (ARD), Big Earth Data Vol., 1, Iss. 1-2.
- Húska D., Jurik E., Tátošová L., Šinka K., Jakabovičová J.** 2017. Cultural Landscape, Floods and Remote Sensin, Journal of Ecological Engineering, Vol. 18, Iss. 3, p.31–36 DOI: 10.12911/22998993/69348.
- Klemas V.,** 2015. Remote Sensing of Floods and Flood-Prone Areas: An Overview, Journal of Coastal Research, Vol. 00, No. 0, 0000, Coconut Creek (Florida), ISSN 0749-0208.
- Kyriou A., Nikolakopoulos K.** 2018. Assessing the suitability of Sentinel-1 data for landslide mapping, European Journal of Remote Sensin, Vol. 51, No. 1, p.402–411.
- Lacroixa P., Bièvre G., Pathiera E., Kniessb U., Jongmansa D.** 2018. Use of Sentinel-2 images for the detection of precursory motions before landslide failures, Remote Sensing of Environment 215, p.507-516.
- Lin L., Di L., Yu E., Kang L., Shrestha R., Md. Shahinoor R., Junmei T., Meixia D., Ziheng S., Chen Zh., Lei H.** 2016. A Review of Remote Sensing in Flood Assessment, Center for Spatial Information Science and Systems (CSISS), George Mason University.
- Magno R., De Filippis T., Di Giuseppe E., Pasqui M., Rapisardi E., Rocchi L.** 2019. An Interoperable Climate Service for Drought Monitoring, Institute of BioEconomy (IBE-CNR), Florence, Italy, October, DOI: 10.13140/RG.2.2.25399.88480, Drought Observatory for the IBE-CNR Climate Services.
- Michella A., Domenico F., Mustafee V. and I.,** 2019. Sentinel-2 Vegetation Health Index and EarlyOnset Drought Detection in Kenya, Airbus Defence and Space.
- Nativi S., Mazzetti P., Craglia M.,** 2017. A view-based model of data-cube to support big earth data systems interoperability, Big Earth Data Vol.1, issue 1-2., p.75-100
- Nguyen N., Nguyen B.** 2016. Potential of drought monitoring using Sentinel-2 data, Conference: GeoInformatics for Spatial-Infrastructure Development in Earth and Allied Sciences (GIS-IDEAS), At Hanoi, Vietnam.
- Niculescu S., Billey A., Talab-Ou-Ali H.** 2019. Random Forest Classification using Sentinel-1 and Sentinel-2 series for vegetation monitoring in the Pays de Brest (France), Université de Bretagne Occidentale, CNRS, LETG Brest UMR 6554 CNRS, France.
- Qi Zh., Liu X.** 2019. Big data: new methods and ideas in geological scientific research, Big Earth Data, 3:1, 1-7, DOI: 10.1080/20964471.2018.1564478.
- Qi Zh., Weidong S., Yong Zh., Fanglin Y., Shoutao J., Wanfeng Ch.** 2019. New discrimination diagrams for basalts based on big data research, Big Earth Data, 3:1, 45-55, DOI: 10.1080/20964471.2019.1576262
- Quintanoa C., Fernández-Mansob A., Fernández-Mans O.** 2018. Combination of Landsat and Sentinel-2 MSI data for initial assessing of burn severity, Int J Appl Earth Obs Geoinformation 64, p.221-225.

- Rizvi S.R., Killough B., Cherry A., Gowda S.** 2018. The Ceos Data Cube Portal: A User-Friendly, Open Source Software Solution for the Distribution, Exploration, Analysis, and Visualization of Analysis Ready Data. In Proceedings of the IGARSS 2018–2018 IEEE International Geoscience and Remote Sensing Symposium, Valencia, Spain, 22–27 July, p.8639–8642.
- Szostak M., Hawrylo P., Piela D.** 2017. Using of Sentinel-2 images for automation of the forest succession detection, *European Journal of Remote Sensing*, Vol. 51, N. 1, p.142–149.
- Tiede D., Sudmanns M., Augustin H., Lang S., Baraldi A.** 2019. Sentinel-2 Semantic Data & Information Cube Austria, Proc. of the 2019 conference on Big Data from Space (BIDS'19), DOI:10.27.60/848593, Germany.
- Urban M., Berger Ch., Mudau T., Heckel K., Truckenbrodt J., Onyango Odipo V., Smit I., Schmulilius Ch.** 2018. Surface Moisture and Vegetation Cover Analysis for Drought Monitoring in the Southern Kruger National Park Using Sentinel-1, Sentinel-2, and Landsat-8, *Remote Sensing* 10(9):1482, DOI:10.3390/rs10091482, Detecting changes in essential ecosystem and biodiversity properties - towards a Biosphere Atmosphere Change Index.
- Vidyapriya V., Kaviya K., Ramalingam Dr.M.** 2019. A Hydrodynamic Model for Urban Flooding Using Remote Sensing and Gis, Institute of Remote Sensing, Anna University, Chennai-600025.
- Wang Y., Wang X., Luo J., Yu Zh., Wang J.** 2019. The quantitative classification of granites and their metallogenetic relations in West Qinling, Gansu Province, China, *Big Earth Data*, 3:1, 56-66, DOI: 10.1080/20964471.2019.1583054.
- Yang Ch., Huang Q., Li Zh., Liu K., Hu F.** 2017. Big Data and cloud computing: innovation opportunities and challenges, *International Journal of Digital Earth*, Vol. 10 issue 1, p.13-53.
- Yao X., Liu Y., Cao Q., Li J., Huang R., Woodcock R., Paget M., Wang J., Li G.** 2018. China Data Cube (CDC) for Big Earth Observation Data: Lessons Learned from the Design and Implementation, (Stefano Nativi In Proceedings of the 2018 International Workshop on Big Geospatial Data and Data Science (BGDDS), p.1–3, Wuhan, China.

БОЛЬШИЕ ДАННЫЕ, ПЕРСПЕКТИВЫ И АКТУАЛЬНЫЕ ЗАДАЧИ ИХ ИСПОЛЬЗОВАНИЯ В НАУКАХ О ЗЕМЛЕ И СМЕЖНЫХ ОБЛАСТЯХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Авагян А.А., Асцатрян Г.В., Аракелян А.А., Тарасян Н.А.,
Нерсисян А.О.**

Резюме

Данная статья имеет цель ознакомить читателя с перспективами и возможностями использования больших данных для решения научных задач, актуальных для Армении.

В статье представлена модель организации, обработки и использования таких данных, получившая название «куба больших данных», а также опыт решения научных задач, решаемых методами и технологиями этой модели. Из числа актуальных вопросов в статье рассмотрены принципы архивации спутниковых данных и их подготовки для использования в классе задач оценки качества и количества ресурсов поверхностных вод и прогноза их кратковременных изменений, в том числе - определение закономерностей формирования поверхностного стока в условиях определенного речного бассейна, оперативной оценки величины поверхностного стока и расчета заполненности малых озер и искусственных водоемов, прогноз по данным спутниковых наблюдений возникновения критических поверхностных стоков и опасности наводнения. Также рассматриваются

принципы разработки системы экспертной оценки опасности и прогнозирования возникновения лесных пожаров.

**BIG DATA, PROSPECTS AND CURRENT CHALLENGES OF ITS USE
IN EARTH SCIENCES AND RELATED FIELDS IN REPUBLIC OF
ARMENIA**

**Avagyan A.A., Astsatryan H.V., Arakelyan A.A., Tarasyan N. H.,
Nersisyan A.H.**

Abstract

This article aims to introduce the reader the prospects and possibilities of using big data to solve scientific problems relevant to Armenia. The article presents a model of organization, processing, and use of such data, called "big data cube", as well as experience in solving scientific problems solved by methods and technologies of this model. Among the relevant issues, the article considers the principles of archiving satellite data and preparing them for use in the class of problems for assessing the quality and quantity of surface water resources and predicting their short-term changes, including defining the patterns of surface runoff formation in a particular river basin, operational assessment of surface flow and calculation of the occupancy of small lakes and artificial reservoirs, and forecasting the occurrence of critical surface flow and flood hazards based on satellite observations.

**ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ IX ԴԱՐԻ ԴՎԻՆԻ (ՀԱՅԱՍՏԱՆ)
ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ. ԴԵՊՔԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ԹՎԱԳՐՈՒՄԸ**

Հարությունյան Ռ.Ա.

*ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24ա,
Հայաստանի Հանրապետություն
e-mail: roubenhar@web.am
Հանձնվել է հրատարակչություն 22.09.2021թ.*

Դվինի IX դարի ավերիչ երկրաշարժերը Հայաստանում տեղի ունեցած ամենահայտնի պատմական երկրաշարժերից են: Սակայն մինչ օրս մասնագետները միակարծիք չեն դրանց բնութագրերի վերաբերյալ: Վիճարկվում են՝ տեղի ունեցած երկրաշարժերի քանակը, տարեթվերը, ավերածությունների տարածքները, ուժգնությունները, վերկենտրոնների տեկտոնական դիրքները: Սույն հոդվածում, պատմական վկայությունների վերլուծության հիման վրա, անդրադառնում ենք առաջին երկու վիճահարույց բնութագրերին, ճշտելով երկրաշարժերի թվագրումը:

Հիմնաբառերը՝ Դվին, պատմական երկրաշարժ, թվագրում:

Նախաբան

Մինչև XX դարի 90-ական թվականները մեզանում տարածված էր այն կարծիքը, որ Դվինում կարճ ժամանակամիջոցում՝ 851-893 թվականներին տեղի են ունեցել 4-5 ավերիչ երկրաշարժ: Դրանց մասին տարբեր պատմագրերի վկայությունները գետեղված էին երկրաշարժերի մասին պատմական վկայությունների ժողովածուներում և մասնագիտական կատալոգներում (Мушкетов и др. 1893, Կոստանեանց, 1902, Бюс, 1948, Ստեփանյան, 1964, Новый каталог, 1977, Карапетян, 1986):

Սպիտակի 1988 թվականի աղետալի երկրաշարժից հետո, երբ ավելի մեծ թվով մասնագետներ ներգրավվեցին Հայաստանի տարածքի երկրաշարժագիտական ուսումնասիրություններում, պարզ դարձավ, որ IX դարում Դվինում տեղի են ունեցել միայն 2 ավերիչ երկրաշարժ՝ 863 և 893 թվականներին (Ambraseis, 1982; Berberian, 1994; Guidoboni et al, 1995): Սակայն մեր այն գործընկերները, որոնք մինչ օրս հիմնվում են վերոհիշյալ և ներկայիս (Годзиковская, 2001, 2012) ռուսա-

լեզու կատալոգների վրա, շարունակում են մնալ Դվինի 4-5 ավերիչ երկրաշարժի թյուր տեսակետին:

Տարաձայնություններ կան նաև այն մասնագետների շրջանում, որոնք ընդունում են Դվինի 2 ավերիչ երկրաշարժերի եղելությունը: Ըստ Թ. Բաբայանի (Բաբայան, 2006) Դվինի առաջին երկրաշարժը տեղի է ունեցել ոչ թե 863, այլ 858 թվականին:

Միակարծություն չկա նաև երկրաշարժերի վերկենտրոնների տեղադրության խնդրի շուրջը՝ հետազոտողների մեծ մասը երկրաշարժերի վերկենտրոնները տեղադրում են Դվինի մերձակայքում (Amb-raseis, 1982; Berberian, 1994; Guidoboni et al, 1995, Բաբայան, 2006), սակայն Ա.Կարախանյանը իր գործընկերների հետ դիտարկում են այլ տեղադրությունների հնարավորությունը, չգալով վերջնական որոշման (Karakhanian et al. 2011. 2016):

Մեր նպատակն է՝ առաջնային պատմական վկայությունների և մինչ այժմ կատարված տարաբնույթ ուսումնասիրությունների և եզրակացությունների հիման վրա, պարզել Դվինի IX դարի ավերիչ երկրաշարժերի տարակարծություններ ունեցող բնութագրերը և տալ պարզաբանումներ: Նախատեսվում է այդ վերլուծությունների արդյունքները հրապարակել 3 հոդվածով, որոնցից առաջինը սույն հոդվածն է:

IX-րդ դարի Դվինի ավերիչ երկրաշարժերի քանակը և նրանց թվագրումը

Առավել համապարփակ Դվինի երկրաշարժերի պատմագրական տվյալների բազմությունը՝ 7-8 դեպք, բերված է Լ.Բարսեղյանի կազմած պատմագրական ժողովածուում (Բարսեղյան, 1995): Այստեղ երկրաշարժերի ժամանակակից պատմագրիքներ Թովմա Արծրունուն (IX-X դդ.) և Հովհաննես Դրասխանակերտցուն (840/850 - 929) են վերագրվում 858թ. ձմռան, 863թ. գարնան և 893թ. ապրիլի դեպքերը, վերջին երկու կարծիքը վերագրվում է նաև Ասողիկին (X-XI դդ.), իսկ հետագա պատմագրերին՝ 851 (854)թ. - Մխիթար Այրիվանեցի (XIII դար), 862թ. - Ինճիճեան (XIX դար), 865թ.- Սամուել Անեցի (XII դար), 869թ. - Մովսես Կաղանկատվացի (Դասխուրանցի) (X դար) դեպքերը: Կասկածից վեր է, որ այդ թվագրումների մեծ քանակը Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու, վկայությունների հետագա (X-XIX դար) պատմագիրների թյուրըմբռնման հետևանք է:

Ինչպես նշվեց վերևում, ներկայումս Հայաստանում հետազոտողների մեծագույն մասը ընդունում է IX-րդ դարում Դվինում տեղի ունեցած միայն երկու ավերիչ երկրաշարժի եղելությունը, սակայն դեռ կա տարակարծություն առաջին երկրաշարժի թվագրման հարցի շուրջ՝ 858, թե 863 թվական:

Առաջին երկրաշարժի թվագրումը: Քանի որ ամենահավաստի համարվում են ժամանակակիցների վկայությունները, ապա որպես

հետագա վերլուծությունների հիմք, ամբողջությամբ մեջբերենք Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները Դվինի առաջին ավերիչ երկրաշարժի ժամանակի մասին:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու (Դրասխանակերտցի, 1996). *«Հայաստան ուղարկված Ալի Արմանի անունով մի ոստիկան ամիրայետի հրամանով նրան (Աշոտին) կարգում է Հայոց իշխանաց իշխան...»*

«Բայց այդ ժամանակներում Դվին քաղաքում սարսափելի երկրաշարժ է լինում, և շատ տներ, պարիսպներ, ապարանքներ ցնցվում ու փլուզվում են: ... Եվ Ջաքարիա սուրբ հայրապետը... աղերսալի աղոթք էր մատուցում բարեգութ Աստծուն...»

Ըստ Թովմա Արծրունու (Արծրունի, 1985). *«Այս շարժն (893 թ.) ավելի սաստիկ էր, քան այն, որ եղավ հայոց կաթողիկոս Ջաքարիայի ժամանակ, հայերի գերությունից 7 տարի հետո»*

Այսինքն ըստ Դրասխանակերտցու և Արծրունու Դվինում առաջին երկրաշարժը եղել է, երբ.

- կաթողիկոս է եղել Ջաքարիան - (854/855 - 876թթ.),
- արաբական ոստիկանը եղել է Ալի Ալ-Արմանին (862—863թթ.) (Բիթարյան, 1989),
- Աշոտ Ա-ն նշանակված է լինում իշխանաց իշխան - (862-884թթ.) (<https://hy.wikipedia.org>),
- հայերի գերությունից 7 տարի հետո:

Գուիդոբոնին, այս երկրաշարժի մասին պատմական աղբյուրներում եղած հաղորդումների ուսումնասիրության հիման վրա, եկել է այն վիճահարույց եզրակացության, թե դեպքի տարեթվի որոշումը բարդ է, քանի որ այդ հաղորդումները իրարամերժ են և հակասող (Guidoboni et al, 1995): Իր քննարկումների մեջ արվում է մի քանի սխալ պնդում.

- Ըստ Դրասխանակերտցու երկրաշարժը եղել է *«իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո»;*
- Ըստ Թովմա Արծրունու, *«երկրաշարժը եղել է հայոց գերությունից յոթ տարի հետո» - այսինքն 859/860 թվականին:*

Կարծիք է հայտնում, որ արաբական լծի տակ գտնվող Հայաստանում, երբ ժամանակագրական համակարգերը խաթարված էին, պատմագրերին դժվար էր որոշել երկրաշարժի իրական տարեթիվը: Հղում կատարելով XII-րդ դարի պատմագիր Սամուել Անեցու հաղորդագրության վրա, նա որպես դեպքի տարեթիվ ընդունում է 863 թվականը: Սակայն, նկատենք, որ Անեցին հստակ չի նշում երկրաշարժի տարեթիվը, քանի որ բոլոր դեպքերը չէ, որ իր մոտ թվագրված են (Անեցի, 1893): Ըստ նրա կողմից պատմական դեպքերի թվարկման շարքի, երկրաշարժը տեղի է ունեցել ՊԿԵ-ՊԿԹ (865-869) թվականների միջակայքում: Սակայն երկրաշարժի անթվագիր հիշատակմանը. *«Բ սուրբ քառասներորդսն շարժմունք անհնարինք՝ տապալեալ յատակեցին զյուրվս՝ տեւեալ գերիս ամիսս»*, հաջորդող անթվագիր գրառումն է՝

«*Բուլղարք կնքեցան*», իսկ դա տեղի է ունեցել 864 թվականին (Кре-
щение Болгарии <https://ru.wikipedia.org>): Այսինքն երկրաշարժը տեղի է
ունեցել ոչ թե 865 թվականից հետո, այլ 864 թվականից առաջ: Պարզ է,
որ Մամունե Անեցու դեպքերի ժամանակագրության մեջ կա թվա-
գրական խառնաշփոթ¹: Այսպիսով, Գուրգոռնիի կողմից Դվինի առա-
ջին երկրաշարժի թվագրման անհաջող փորձը ավարտվել է սխալ
հղումով և պետք է կարծել, որ նա ուղղակի ընդունել է, ինչպես և Բեր-
բերյանը, Ամբրասեյսի թվագրումը:

Թ.Բաբայանը (Բաբայան, 2006), ի տարբերություն այլ հետազո-
տողների, կարծում է, որ առաջին երկրաշարժը տեղի է ունեցել, ոչ թե
863, այլ 858 թվականին:


Ըստ նրա երկրաշարժը եղել է այն ժամանակ, երբ.

- կաթողիկոս է եղել Զաքարիան - (854/855 - 876թթ.);
- Աշոտ Ա-ն եղել է իշխանաց իշխան, ինչը ըստ Թ.Բաբայանի
եղել է 855-884 թվականներին;
- ըստ Թովմա Արծրունու վկայության. «*երկրաշարժը եղել է հա-
յերի գերությունից 7 տարի հետո*»: Թ.Բաբայանը ելնելով այն
փաստից, որ հայ իշխանները գերության են տարվել Բուլղայի
կողմից 551 թվականին, համարում է, որ խոսքը գնում է
551+7=858 թվականի մասին: Սակայն այս մոտեցումով հաշ-
վարկից դուրս է մնում գերության առաջին տարին:

Վերջին երկու պնդումը հավաստի չեն, քանի որ իրականում.

- Աշոտ Ա-ն եղել է իշխանաց իշխան ոչ թե (855-884թթ.), այլ 862-
884 թվականներին, իսկ 855-862թթ. նա եղել է իշխան
(<https://hy.wikipedia.org>):
- Նկատենք նաև, որ Ալի ալ-Արմանին, որը «*ամիրապետի հրա-
մանով նրան (Աշոտին) կարգում է Հայոց իշխանաց իշխան*»
(Դրասխանակերտցի, 1996), Հայաստանում ոստիկան է եղել
862—863 թվականներին (Բիթաբյան, 1989):
- Եթե ընդունենք, որ Արծրունին նշելով «*հայերի գերությունից 7
տարի հետո*», նկատի է ունեցել ոչ թե գերի տարվելուց, այլ գե-
րության ավարտից 7 տարի հետո, ապա կստանանք երկրա-
շարժի մեկ այլ թվական: Հենց ինքը Արծրունին նշում է, որ
իշխանները սկսել են վերադառնալ հայրենի կալվածքները 857
թվականից (Արծրունի, 1985), այսինքն գերության վերջին տա-
րին 856 թվականն էր: Այդ տարում Բյուզանդիայի և խալի-
ֆայության միջև վերսկսված պատերազմը և տարածաշրջանում
ստեղծված քաղաքական իրավիճակը ստիպեցին Մուսավաքիլ
խալիֆային փոխել իր քաղաքականությունը Հայաստանի հան-
դեպ և նպաստել հայ իշխանների հզորացմանը (Վարդանյան,
1975):

¹ Ի դեպ Անեցին ճիշտ չի նշում նաև Դվինի երկրորդ երկրաշարժի տարեթիվը՝ ՊՂԸ -
898թ. (Անեցի, 1893):



Նկ.1. Դվինի առաջին երկրաշարժի ժամանակագրությունը ըստ ժամանակակիցների վկայությունների (սլաքներով՝ Արծրունու վկայության Թ.Բաբայանի (858) և հեղինակի (863) գծագրական մեկնությունները):

Այսպիսով, ըստ Դրասխանակերտցու, երկրաշարժը եղել է 862 թվականից հետո, իսկ Արծրունին ճշտում է երկրաշարժի տարին, որը $556+7=863$ թվականն է (նկ.1):

Իրականում Դվինի առաջին երկրաշարժի թվականը հստակ նշում է միայն X-րդ դարի պատմագիր Ասողիկը: Նա միանշանակ հայտնում է, որ երկրաշարժը տեղի է ունեցել 863 թվականին (Ասողիկ, 2000). «Սրա (Աշուտ Ա-ի) օրերում (ՅԺԲ) երեք հարյուր տասներկու թվականին (312+551=863թ.) Քառասնորդաց պահքի փոքր շաբաթում տեղի ունեցավ ահագին մեծ երկրաշարժ...»:

Ելնելով այս տեղեկությունից, որ երկրաշարժը տեղի է ունեցել Քառասնորդաց պահքի ժամանակ, որոշ հետազոտողներ ունեն այն մտայնությունը, թե երկրաշարժը տեղի է ունեցել 863 թվականի գարնանը (Բարսեղյան, 1995): Չի բացառվում, որ նրանք «փոքր շաբաթ» կապակցությունը ընկալել են որպես Ավագ շաբաթի շաբաթ օրը, ինչպես դա ընկալել է և Է.Գուիդոբոնին՝ «Saturday» (Guidoboni et al, 1995):

Սակայն Դրասխանակերտցին հստակ վկայում է, որ երկրաշարժի ժամանակ եղել «*ցրտաշունչ ձմեռային սառնամանիք*» (Դրասխանակերտցի, 1996):

Ըստ Ամբրասեյսի երկրաշարժը տեղի է ունեցել 863 թվականի փետրվարի 13-ին (Ambraseis, 1982): Այս որոշումը հիմնված է X դարի Պաղեստին-Վրացական օրացույցում գետեղված, փետրվարին ամսին վերբերվող, մի կարճ վկայության վրա՝ «13. (Terrae) motus, sancti Demetrii [demetre], et Martiniani [martinianoz] monachi», այսինքն՝ «13, երկրաշարժի, Սբ.Դեմետրիոսի և Մարտինիան վանականի» օրն է (Garitte, 1958):

Գուիդոբոնին ընդունելով երկրաշարժի օրվա այդ որոշումը, նկատում է, որ ըստ գրքի խմբագիր Ջ.Գարիտի, Մր.Դեմետրիուսի օրը, որը Թեսալոնիկում հիշվում է հոկտեմբերի 26-ին, որպես 740 և 989 թվականներին Կոնստանդնուպոլիսում տեղի ունեցած երկու երկրաշարժերի օր (Guidoboni et al, 1995): Ջ.Գարիտը նշում է նաև, որ հայտնի չէ որևէ երկրաշարժ, որը տեղի է ունեցել փետրվարի 13-ին, իսկ այդ օրը հիշատակում են հույները, ղպտիները, եթովպացիները և վրացիները, որպես «առասպելական Մարտինիան ճգնավորի» օր (Garitte, 1958): Հավանաբար Ամբրասեյսը հնարավոր է համարել կապել այդ անհասցե փետրվարյան երկրաշարժը Վրաստանի հարևանությամբ գտնվող Դվինում, IX դարում, ձմռանը տեղի ունեցած երկրաշարժի հետ: Այսինքն փետրվարի 13-ը, որպես Դվինի առաջին երկրաշարժի օր շատ թույլ է հիմնավորված:

Ըստ Թ.Բաբայանի, երկրաշարժը տեղի է ունեցել փետրվարի 14-ին (Բաբայան, 2006), քանի որ այդ օրն է սկսվում 858 թ. Մեծ պաւսը, ինչը չի կարող ընդունվել, որովհետև իրականում, ինչպես ցույց տրվեց վերևում, երկրաշարժը տեղի է ունեցել 863 թվականին:

Փորձենք որոշել, թե որ ամսին և որ օրն է եղել երկրաշարժը ըստ Աստղիկի վերը մեջբերված տեղեկության, ուր նա, հավանաբար այլ ականատեսների չպահպանված վկայությունների հիման վրա, ճշտում է նաև երկրաշարժի ժամանակը:

Աստղիկին կրկնում են հետագա պատմիչներ Սամուել Անեցին (XII դար) և Մխիթար Այրիվանեցին (XIII դար):

Արդեն ցույց ենք տրվել վերևում, որ, ըստ Սամուել Անեցու իրարամեծ տվյալների, երկրաշարժն եղել է 865-869թթ. միջակայքում, սակայն 864 թվականից առաջ. «*Ի սուրբ քառասներորդսն շարժմունք անհնարինք*» (Անեցի, 1893):

Ըստ Մխիթար Այրիվանեցու երկրաշարժը եղել է 854-871թթ. Միջակայքում. ««*Աղ ու հացի*» օրը *կործանիչ երկրաշարժ Դվինում*» (Այրիվանեցի, 1860):

Այսպիսով, ըստ հայ պատմիչների, երկրաշարժը տեղի է ունեցել.

- ցրտաշունչ ձմեռային սառնամանիքին (Դրասխանակերտցի, 1996)
- Քառասներորդաց պահքի փոքր շաբաթում (Աստղիկ, 2000)
- Ի սուրբ քառասներորդսն (Անեցի, 1893)
- «Աղ ու հացի» օրը (Այրիվանեցի, 1860):

863 թվականի Զատիկի օրը ապրիլի 11-ն էր (Калькулятор расчета дня Пасхи, <https://astromenu.com/>), այսինքն, նրանից առաջ 48 օր տևող, Մեծ պահքի առաջին պահեցության օրը փետրվարի 22-ն էր: Այսպիսով Պահքի առաջին շաբաթը (ըստ Աստղիկի՝ «փոքր շաբաթը») համընկել է ձմռան վերջին շաբաթի հետ և կարելի է ընդունել, որ 863 թվականի երկրաշարժը տեղի է ունեցել «Աղ ու հացի» առաջին օրը՝ փետրվարի 22-ին (աղ.1):

863թ.	Մեծ Պահքի հիշարժան օրերը և շաբաթները
Փետրվարի 21	Բուն Բարեկենդան
Փետրվարի 22	Առաջին պահեցողության օրը՝ «Աղ ու հացի» առաջին օրը
Փետրվարի 28	(863թ. Ձմռան վերջին շաբաթը) Պահքի առաջին շաբաթը՝ «փոքր շաբաթը» ըստ Աստղիկի
Մարտի 1	Գարնանային հինգ անցողիկ շաբաթները
Ապրիլի 4	
Ապրիլի 5	Պահքի Ավագ շաբաթը
Ապրիլի 10	
Ապրիլի 11	Ավագ շաբաթի «փոքր շաբաթ» օրը Զատիկ

